

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՈԵԿՏՈՆԵՊՈՅԱՆՈՐ
ՈՈՒԲԵՆ ԿԱՌԵՐ ՄԱՐԴԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՅԱՆ

Անուշ Մուշեղի Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը»
թեմայով ատենախոսության վերաբերյալ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 09.11.2020թ. թիվ 3 նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, ք.գ.ք., դոցենտներ Ք. Աբրահամյանը, Լ. Գալստյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը, մ.գ.ք., դոցենտ Ն. Տողանյանը:

ՀԱԵՑԻՆ՝ Անուշ Մուշեղի Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտում գործող ԲՈԿ-ի գրականագիտության գծով 003 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆ. Ս. Դանիելյանը, դոցենտներ Ք. Աբրահամյանը, Լ. Գալստյանը, Ն. Խաչատրյանը, Ա. Մուրադյանը եւ մ.գ.ք., դոցենտ Ն. Տողանյանը:

Անուշ Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» թեկնածուական ատենախոսությունը փորձ է ի մի բերել, ամբողջության մեջ դիտարկել գրողի ստեղծագործական աշխարհը, ինչը գնահատելի է: Գնահատելի է նաև պատմական թեմատիկայով ստեղծագործությունների պարագայում

աղբյուրների մանրամասն, ինքնատիպ վերլուծական շնորհով, պատմական փաստերի համադրությամբ աչքի ընկնող ուսումնասիրությունը, հատկապես նկատի ունենք Աստվածատուր Սալթանյանի պատմաճանաչողական ենթահողը՝ հարուստ կողմնորոշումներով, Մանյա Ղազարյանի, Զարելինի, Գրաբարի եւ ուրիշների նյութերի ներգրավումով (էջ 47-51), ինչը փաստում է նաև օգտագործված գրականության մեջ ցանկը:

Ատենախոսությունը բաղկացած է 5 գլուխներից, որոնցից երկրորդը եւ չորրորդը ունեն ենթագլուխներ: Թեկնածուական ատենախոսության համար այս բաժանումը ծանրաբեռնվածություն եւ անհամաշափություն է բերում: Ներածության բաժնում ներառված է թեմայի մշակվածությունը, որը, ինչպես իրավացիորեն նկատում է նաև ատենախոսը, այնքան էլ հարուստ չէ, եւ նման կարգի ամբողջական ստեղծագործության վերլուծության պարտավորությունը թվում է արդարացված: Ատենախոսը ձգտել է սահմանել իր ուսումնասիրության խնդիրներն ու նպատակները:

Այստեղ ունենք նկատառում՝ կապված ժանրերի եւ թեմատիկայի իմաստային տարրաժանման հետ: Կարծում ենք, շփոթք հաղթահարելու համար բացատրության կարիք ունի հետեւյալ միտքը. «Հ. Ղուկասյանի ստեղծագործությունը թեմատիկ առումով բաժանվում է պատմական, հայրենասիրական, սոցիալական եւ այլ թեմաներով գրված ստեղծագործությունների, սակայն առավել ճիշտ ենք համարել այն ներկայացնել ըստ ժանրային թեմատիկայի՝ բանաստեղծության, վիպասանության, մանկագրության եւ այլ ժանրերում՝ առավել ընդգծելու հեղինակի բազմաժանր դրսեւորումները» (էջ 8): Նույնը նաև բերվում է եզրակացության մեջ (էջ 171): Մանկագրությունը, բանաստեղծությունը, վիպասանությունը մեկ ընդհանուր գծի վրա դժվար է տեղափորել: Նյութին իր կողմից առաջին անգամ ամբողջականորեն անդրադարձի մասին նույն ներածական հատվածում շեշտվում է երկից (էջեր 4 եւ 9): Կամ արդյոք հենց ի՞նքն է առաջինը բացահայտել Հովի. Ղուկասյանի արձակ գործերի «Էռությունը» (էջ 7): Առկախ, վերացական է մնում «...վերհանելով հայ նշանավոր հոգեւոր-մշակութային գործիչների կյանքը եւ ներկայացնելով դրա պատմագեղարվեստական ուսումնասիրությունը՝ հեղինակը հարստացնում է հայ գրականությունը» արտահայտությունը (էջ 9):

Արդյո՞ք Լյուդվիգ Կարապետյանի կազմած Հովհ. Ղուկասյանի ստեղծագործություններից ցանկը վերլուծական ակնարկ պիտի համարել, թեկուզ «թեթև» (Էջ 3):

Առաջին գլուխը վերաբերում է բանաստեղծությանը, ուր արդարացիորեն հաստատում է, որ հեղինակը ժանրում ստեղծագործական նվաճումների չի հասել: Առհասարակ, նման դատողության պայմաններում կարելի էր խուսափել նաև նյութը առանձին գլխով ներակայացնելու գայթակղությունից: Այս հատվածում ավելորդ եւ ժամանակավրեալ են թվում խորհրդային կարգերի փառաբանման հեղինակային վկայաբերումները (Էջ 15-16), Նաիրի Զարյանի «Լենին» բանաստեղծության մեջբերումը (Էջ 22): Տարօրինակ է թվում Հովհ. Ղուկասյանի բանաստեղծական շարքերի ետքնթաց ներկայացումը, որը բերում է նաև ժամանակագրական եւ բովանդակային խախտում: Վերլուծությունները հաճախ ինքնանպատակ բնույթ են ստանում, ինչպես օրինակ 23-րդ էջում «Էլեզիա» բանաստեղծության առիթով:

Երկրորդ գլուխը կոչվում է «Հովհաննես Ղուկասյանը վիպասան» եւ բաղկացած է վեց ենթագլուխներից: Այստեղ գնահատելի ենք համարում վեպերի ժանրային բնորոշումների շուրջ տեսաբանական դատողությունները (Էջ 29-30): Հետաքրքիր են նաև Շաֆֆի-Ղուկասյան, Դեմիրճյան-Ղուկասյան առնչությունների վերհանումները: Այնուհանդերձ, կարծում ենք, շատ մանր է բաժանումը. կարելի էր միավորել 2.1 եւ 2.3, 2.2 եւ 2.4 ենթագլուխների բովանդակությունը՝ ընդհանրացնող ակնարկներով, խուսափելով կրկնություններից, մանավանդ կերպարների վերլուծության ճանապարհին ատենախոսն ինքն էլ ընտրել է երկու վեպերի՝ «Ուկան Երեւանցի» եւ «Բողդան Սալթանով», զուգաղիք քննության եղանակը: Կառուցվածքի առումով ինդիր է հարուցում նաև 2.6՝ «Հ. Ղուկասյանի՝ պատմական թեմայով գրված պատմվածքները» ենթագլուխը, որը, ըստ էության, չի բացատրում գլխի խորագիրը: Անտեսված են այլ թեմաներով գրված պատմվածքները:

Վրիպակ ենք դիտում թատերզակ Ժան-Բատիստ Ռասինին նկարիչ համարելը (Էջ 43): Կրկնվում է 125-րդ եւ 126-րդ տողատակերի բովանդակությունը: Ավելորդ է թվում Թղկուրանցու բանաստեղծության մեջբերումը (Էջ 92-93):

Երրորդ գլուխը վերաբերում է Հովհ. Ղուկասյանի մանկագրությանը: Այս գլխի սկզբում արդարացված չէ էքսկուրսը մանկագրության սահմանումների եւ այդ

գրականության անցած ձանապարհի մասին, մինչդեռ ինքն էլ հաստատում է, որ մանրամասն անդրադարձը իր խնդրառությունից դուրս է (էջ 103-104): Ի դեպ, նույն միտումը նկատելի է նաև հաջորդ՝ «Հ. Ղուկասյանի՝ բանահյուսական հենքով գրված ստեղծագործությունները» գլուում (էջ 123-125):

Լավ է, որ ատենախոսին հաջողվում է խուսափել հեղինակի հանդեպ սիրահարվածությունից, ինչը սովորաբար է խանգարիչ հանգամանք է: Սա օգնում է տեսնել նաև ստեղծագործական որոշ թերություններ, որոնց մասին, սակայն, առանձին դեպքերում ակնարկվում է՝ առանց խորանալու բացատրությունների եւ փաստարկումների մեջ (էջեր 46, 69, 102 եւ այլն):

Վերջին՝ «Հ. Ղուկասյանի «Մաֆֆի» մենագրությունը» գլուխը կարող էր առանձին չներկայացվել, այլ տրոհվել գրական հայացքների քննության մեջ:

Այստեղ ուռճացված է թվում «Արշալույս Արարատյան»-ի դերի բացարձակացումը, թե «Նա իր ժամանակի, ոչ միայն Զմյուռնիայի, այլև Կ. Պոլսի ամենազդեցիկ թերթն է եղել» (էջ 157) կամ հաստատումը, թե «Բազմավեպ»-ը աշխարհաբար հնագույն պարբերականն է (նույն տեղում), երբ վերոնշյալ «Արշալույս Արարատյան»-ը նախորդել է նրան:

Ատենախոսության մեջ տեղ են գտել ոճային-քերականական տարրեր սպրդումներ, ինչպես օրինակ՝ «Մեծ է մեծ երախտավոր տպագրիչ Ռուկան Երեւանցու դերը» (էջ 27), «Թաղիաղյանի խոհերը բեկվում էին իրար» (էջ 87), «Մի կողմից մարդասեր, ազնիվ, բարի լինելու կարեւորագույն ձգուումը՝ սերմանելու որդու դաստիարակության, մյուս կողմից՝ ոտնահարողներից վրեժ լուծելու պատզամը...» (էջ 107), «Օրինակ, վիպակի արկածախնդիր հերոսը՝ Հովհեկը Դադումյանը, իր եղբոր՝ Համլիկի մասին այսպես է բացատրում «Համլիկ» անվան հնչեղությունը» (էջ 121), սխալ բառագործածություններ, ինչպես օրինակ՝ «ռահվիրաններից» (էջ 33), «այսպիսինները» (էջ 75), «այդպիսիններին» (էջ 129), «զործով զապված» (էջ 160):

Տողատակերի հղումներում ժողովածուների անվանումները մեծ մասամբ տրվում են առանց չակերտների: Օրինակ՝ «Գրական տեղեկատու» (էջ 3), «Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին» (էջ 46), “Армянско-русские отношения в 17 веке” (էջ 48) եւ այլն: Նմանօրինակ սպրդումների հանդիպում ենք նաև գրականության ցանկում, օրինակ՝ «Մաֆֆին ժամանակակիցների հուշերում» (էջ 182):

Մասնավորապես Մաֆֆու երկերի 1950-ական և 1980-ական թթ. հատորյակների գուգահեռ զործածությունները «Պարույր Հայկացն» և «Սամվել» վեպերի առիթներով արդարացված չեն (էջ 39): Անփութություններ են նկատվում դասական ուղղագրությամբ հատվածների մեջբերումներում (էջեր 29, 32, 35 և այլն): Քաղվածքները գուգադրաբար բերվում են ոռուերենով և հայերենով, ինչը ավելորդ է:

Նշենք,որ եզրակացությունները բխում են ատենախոսության դրույթներից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Անուշ Մուշեղի Ստեփանյանի «Հովհաննես Ղուկասյանի ստեղծագործությունը» թեմայով թեկնածուական ատենախոսության վրա կատարված է տեսական աշխատանք, ուսումնասիրված է բավական հարուստ աղբյուրագիտություն, վերհանված է զրոյի ստեղծագործական ամբողջական դիմանկարը։ Այն համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին և Ժ.01.02 «Նորագույն շրջանի հայ զրականություն» թվանիշին, ուստի երաշխավորվում է հրապարակային պաշտպանության։

ԱՌԵՎԵՆ ԴԱՎԹԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՅ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՅԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Հաստատում եմ պրոֆ. Ա. Ե. Գևառելյանի ստորագրությունը:



Անդրեաս ՄԱՐԻԱՄ ՄԿՐՏՉԻ ԽԱՊԻՐՅԱՆ
Ա. Ա. ԽՈՎՃՅԱՆԻ ԱԼՎԱՆ ՀՊԱՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ